ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 29.10.2021թ. ԹԻՎ 907-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

09. նոյեմբերի 2021 թ.
ժամը 15:00

Հանձնաժողովի նախագահ
Ա. Քալոյան ՇՊև ՏԲ շինությունների պահպանման գլխ. ինժեներ
Հանձնաժողովի բացող անդամներ
Ա. Գրիգորյան ՇՊև ՏԲ տրանսպորտի տեղամասի գլխավոր մասնագետ
Ն. Գևորգյան Իրավապայմանագրային և գնումների բաժնի իրավաբան
Հանձնաժողովի գնահատող անդամներ
Հ. Ղազարյան ՇՊև ՏԲ ղեկավար-անվտանգության գլխավոր տեսուչ
Գ. Մանուչարյան ՇՊև ՏԲ շինությունների պահպանման առաջատար ինժեներ
Հանձնաժողովի քարտուղար
Անահիտ Կրպետյան

Օրակարգ

1. *ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/21* ծածկագրով հայտերի բացում և գնահատում՝ հրավերով սահմանված կարգով:
2.Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում :

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները

1. <<ԼԵՎԱՆ>> ՍՊԸ,
2. <<Գայանե Հակոբյան Գևորգի>> ԱՁ,
3. <<ՕՄԵԳԱ ՇԻՆ>> ՍՊԸ

Հանձնաժողովի նախագահ Ա. Քալոյանը հայտարարեց սույն ընթացակարգի շրջանակում գնման առարկայի գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը: **Ներկայացվում է գնային առաջարկը առանց ԱԱՀ**

Չափ h/h	Անվանում	<<ԼԵՎԱՆ>> ՍՊԸ	<<Գայանե Հակոբյան Գևորգի>> ԱՁ	<<ՕՄԵԳԱ ՇԻՆ>> ՍՊԸ	Նախահ. Գին
1	Խորհրդակցությունների սենյակի կահույք	12 500 000	14 950 000	15 850 000	17 175 140

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը արձանագրեց, որ << ՕՄԵԳԱ ՇԻՆ >> ՍՊԸ կողմից ներակայացված հայտում բացակյում էր հավելված 1.1-ը և 1.3-ը, <<Գայանե Հակոբյան Գևորգի>> ԱՁ կողմից ներակայացված հայտի հավելված 1.1-ում ապրանքային նշան և մակնիշ սյունակները լրացված էր ոչ համապատասխան սյունակների անվանումներին:

Համաձայն սույն ընթացակարգի 8.9 կետի. (Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը)

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով, առաջարկելով << ՕՄԵԳԱ ՇԻՆ >> ՍՊԸ -ին և <<Գայանե Հակոբյան Գևորգի>> ԱՁ-ին շտկել սույն արձանագրությամբ նշված անհամապատասխանությունները մինչև կասեցման ժամկետի ավարտը:
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 12.11.2021թ.-ին ժամը 12.00-ին <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ում:

Ա.Քալոյան

Ա. Գրիգորյան

Ն. Գևորգյան

Հ. Ղազարյան

Գ. Մանուչարյան

Ա. Կարապետյան